ԿԱՆՈՆ

ՑԱՂԱԳՍ ԾԽԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՐՈՒՍԱՍՏԱՆ։

ԳԼՈՒԽ Ա։

ՑՈԳ։ 1։

Ծխական կամ սկզբնական կոչին այնոքիկ յեկեղեցական դպրոցաց որք գտանին առ իւրաքանչիւր եկեղեցեաւ։

ՑՈԳ։ 2։

Պատակ Ծխական դպրոցաց է կրթել զամենայն հայազգի մանկունս ի սկզբնական գիտութիւնս հայացի դպրութեան, յորոց ցանկացողք կարեն մտանել ի թեմական դպրոցս։

ՑՈԳ։ 3։

Ամենայն եկեղեցիք, որ ի քաղաքս և ի գիւղօրէս, պարտին ունել ի սրահի իւրեանց զմի Ծխական դպրոց։

ՑՈԳ։ 4։

Ծխական դպրոցք պարտին լինիլ ի սրահի իւրաքանչիւր եկեղեցեաց։ իսկ եթէ չիցէ անդ յարմարաւոր տեղի, կարեն լինիլ ի մերձաւոր վայրս առ եկեղեցեաւ։

ՑՈԳ։ 5։

Ծխական դպրոցք ենթադրին ընդ տեսչութեամբ հոգևոր իշխանութեանն։ ա)։

Դ ԼՈՒԽ

ՑԱՂԱԳՍ ՀԱԳԻԲԵՐՁՈՒԹԻՒՆ։

ՑՈԳ 6։

Ծխական դպրոցք կառավարին ի ձեռն հոգաբարձուաց, որք ընտրին համահաճութեամբ ժողովրդականաց և հաստատութեամբ թեմական իշխանութեան։

ՑՈԳ 7։

Իւրաքանչիւր Ծխական դպրոց պարտի ունել զերիս հոգաբարձուս, մին հոգևորական և երկուքն աշխարհական։ յորոց մինն պարտի լինիլ երեցփոխան և կեղեցւոյն։ իսկ ի գիւղաքաղաքս և ի քաղաքս առ հասարակ կարևոր համարի ընտրել զՀինգ հոգաբարձուս։

ՑՈԳ։ 8։

Աշխարհական հոգաբարձութիւն ընտրի առաւելութեամբ ձայնից ժողովրդականաց։

ՑՈԳ։ 9։

Հոգաբարձուք պարտին ա) խնամատանել բարեկարգութեան և պայծառութեան դպրոցին բ)։ աշխատել աճեցուցանել զեկամուտս նորա և հատուցանել ծախուց նորին։

ՑՈԳ 10։

Հոգաբարձուք պարտին պահպանել զմիւս կարգապահութեան յամեն յամիս։ և կարգապահ հոգաբարձուն պարտաւոր է երիցս անգամ գոնէ հատուցանել յառաջադիմութեան վարժապետաց և ուսանողաց դպրոցին։

ՑՈԳՈՒՆ։ ա)։ Գիւղական դպրոցք առ հասարակ ենթադրին ընդ տեսչութեամբ հոգևոր իշխանութեանց, իսկ ծխական դպրոցք որ ի բազմամարդ հայաբնակ քաղաքս հոգաբարձութեան թեմական դպրոցաց և կամ կղերանոցաց։

ԳԼ. Գ.

ՑԱՂԱԳՈՒ ԵԿԱՄՏՑ ԴՊՐՈՑԷՑ.

ՑՕԳ. 11.

Պուտք դպրոցաց համարին Ա). սահմանեալ տուրք ծնողաց աշակերտաց Բ). նուիրատուութիւնք բարեպաշտ անձանց Գ) տոկոսիք եկեղեցական դրամագլխոց կամ մասն ինչ ի դրամագլխոց անտի ըստ կարգադրութեան թեմական Ուսաջնորդին և ըստ կանխագոյն գիտութեան Ա. Էջմիածնի Կաթուղիկոսի ամենայն Հայոց.

ՑՕԳ. 12.

Պուտք և ծախք դպրոցին գրին ի ժապաւինեալ տումարի, որ ուսեալ լինի ի հոգևոր իշխանութենէ, որում և հոգաբարձուք յիւրաքանչիւր ամի պարտին առաջի առնել զմուտս և զծախս դպրոցին.

ԳԼ. Դ.

ՑԱՂԱԳՈՒ ԴԱՍԱՏԱՆՑ ԵՎ ՈՒՍԱՆԵԼԻՔ ԱՌԱՐԿԱՑԻՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԷՑ.

ՑՕԳ. 13.

Ծխական դպրոցին պարտի ունել զմի դասատուն. իսկ եթէ ներբեսցեն նիւթական միջոցք, յայնժամ կարելի է յաւելուլ և զերկրորդ դասատուն,

ՑՕԳ. 14.

Որոշումն ժամուց դասատուութեանց կախի զկամաց հոգաբարձուաց.

ՈՒՍԱՆԵԼԻՔ ԱՌԱՐԿԱՑՔ

ա. Ակսզբնական ուսմունք Քրիստոնէական վարդապետութեան.

բ. Խարգմանութիւն Աւետարանի ի գրոց լեզուէ յաշխարհիկ բարբառ.

գ. Ընթերցանութիւն և վայելչագրութիւն հայերէն.

դ. Առաջին մասն քերականութեան Հայոց.

ե. Արբազան պատմութիւն.

զ. Ընթերցանութիւն և վայելչագրութիւն Ռուսաց.

է. Առաջին մասն թուաբանութեան.

Ծանոթ. ա). Ցայնպիսի հայաբնակ գիւղս, յորս սակաւութիւն են բնակիչք և անձեռնհաս գտանին սակաւ վարձելոյ զօրինաւոր դասատու, մարթ է շատանալ դասատուութեամբ Հայոց ընթերցանութեան և գրոյ, աշխարհից սրբազան պատմութեան ևս և թուաբանութեան. Զայս պաշտօն պարտին կատարել տեղական քահանայք կամ տիրացուք. Եթէ սոքա տեղեակ իցեն այլոց ևս առարկայից՝ թուաբանութեան կամ քերականութեան. ընդ պարտականութեանց իւրեանց որ առաջն՝ կարեն ուսուցանել ձրիաբար մինչ ցնշանակումն վասն նոցա չափաւոր ռոճկի կամ՝ ցառանձին իմն տնօրէնութեան, բ. զվերոյգրեալ առարկայս պարտին ուսուցանել կատարելապէս յընթացս երից կամ չորից ամաց և վարժապետք քաղաքաց. յորս հայք օտարազգի բարբառով վարեն և չգիտեն զմայրենի լեզուն, պարտին առանձին խնամ ունել զբուցատրութեան ի հայ լեզու, զի աշակերտք ի մտանելն իւրեանց ի թեմական դպրոցս մարթասցին առանց դժուարութեան ըմբռնել զուսանելի առարկայս որ ի նոսա.

ԳԼ. Ե.

ԵՂԼԵՑՈՅ ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԻՆ

ԵՕԹ. 15.

Վարժապետք ընտրին 'ի ձեռն հոգաբարձուաց և հաստատին 'ի պաշտաման իւրեանց 'ի հոգևոր իշխանութենէ։

ԵՕԹ. 16.

Վարժապետք պարտին լինիլ ըստ բաւականին ուսեալք և ուսումնասէրք, վկայեալք 'ի փորձ աշխատասիրութեանց և կամ վկայեալք օրինաւոր թղթովք թեմական դպրոցաց և կամ վիճակաւոր Առաջնորդաց։

ԵՕԹ. 17.

Ի ծխական դպրոցս պարտին լինիլ վարժապետք երկու. մին վան կրօնագիտութեան Հայոց լեզուին և թուաբանութեան, իսկ միւսն վան Ռուսաց լեզուի։

ԵՕԹ. 18.

Իւրաքանչիւր վարժապետի նշանակի չափաւոր ռոճիկ. իսկ եթէ նիւթական միջոցք դպրոցին ներեսցեն. ըստ բարենկատողութեան դպրոցաց մարթ է նշանակել ոչ միայն զերրորդ վարժապետ, այլ յաւելուլ զռոճիկ առաջնոց վարժապետաց։

ԵՕԹ. 19.

Վարժապետքն պարտին աղգասիրական եռանդեամբ և ժրաջան աշխատութեամբ յառաջ վարել զստանձնեալն նոցա շրջաշրջան։

ԳԼ. Զ.

ԵՂԼԵՑՈՅ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՆ

ԵՕԹ. 20.

Աշակերտք ծխական դպրոցաց պարտին լինիլ երթևեկողք և 'ի մտան իւրեանց 'ի դպրոց ոչ աւելի 11 ամաց և ոչ պակաս քան զ7 ամս։

ԵՕԹ. 21.

Աշակերտք յամենայն օր մանաւանդ 'ի կիւրակէս և 'ի նշանաւոր տօնախմբութիւնս պարտին գնալ յեկեղեցի և 'ի մանկական տիոց անտի ուսանել զկարգ Աստուածպաշտութեան։

ԵՕԹ. 22.

Դրաջան աշակերտք պարգևատրեսցին գրենօք, եթէ ներեսցեն միջոցք դպրոցին ըստ նկատողութեան հոգս բարձուաց։

ԵՕԹ. 23.

Աշակերտք ամենայն ծխական դպրոցաց առ հասարակ պարտին՝ շարունակել զուսումնասիրութիւս իւրեանց անխափան զամենայն ժամանակս տարւոյ, առանց արձակուրդի և յամառնային աւուրս։ Որք ազատ են 'ի դասուց 'ի կիւրակէս և 'ի նշանաւոր աւուրս եկեղեցական տօնակատարութեանց և եթ։